«Այժմ այդ մատուռը շինուած է սրբատաշ քարերից և բաւական մաքուր[1]) ։

«Մատուռի դրան ճակատին կարդացինք հետեւեալ արձանագրութիւնը ։

«Ես Տիկին Եղիսաբէթ Կաճկաճեանց կառուցի մատուռս ի յիշատակ իմ և ամուսնոյս ։ Տէր յիշէ մեզ, երբ բանք կսպառին և գործք կթագաւորեն, ի 1879 թ. Ք.»

«Գուցէ հարցնող լինի, թէ արդեօք ո՞ր տեղից է յայտնի, թէ սուրբ Գրիգորիսն այդ հեռաւոր վայրումն է նահատակուել . . . դրա համար մենք իբրեւ փաստ առաջ կը բերենք նախ, պատմութիւնը և ապա աւանդութիւնը ։

«Ահա թէ ինչ է ասում Խորենացին ։

« . . . Արեւելեան հիւսիսային կողմերի գործակալները Փայտակարան (պէտք է հասկանալ Աղուանքը, Կասբքը և Ատրպատականը) կոչուած հեռաւոր քաղաքի կառավարիչները եկան և ասացին Թագաւորին (Տրդատին), եթէ կամենումես, որ այն կողմերն ուղիղ հաւատի համաձայն վարուին, նրանց եպիսկոպոս ուղարկիր սուրբ Գրիգորի (Լուսաւորչի) ցեղից, որովհետեւ նրանք շատ փափակելով են խնդրում, ստոյգ գիտենք, որ Գրիգորի հռչակուած անունից և նորա զաւակից կ'քաշուին . . . Նրանելի Տրդատը սրան հաւանելով տալիս է նրանց եպիսկոպոս մանուկ Գրիգորիսին, Վրդանէսի մեծ որդուն" . . ։

«Եւ ապա Խորենացին խօսելով Գրիգորիսի առաքինի վարք և բարքի վրայ, ասում է . . . ։

«Երբ Տրդատի մահի համբաւը հասաւ, Սանատրուկի և ու-

---

[1]) Այդ մատուռը եթէ չենք սխալւում, 1880 թուին Ամբրոսիոս վարդապետ Թուրէնեանը, որ եկել էր այս կողմերը ժողովարարութիւն անելու, թեմիս նախկին Առաջնորդ հանգուցեալ Թադէոս եպիսկոպոս Զիւնականի հրամանով օծել է և անունը դրել "Եկեղեցի սրբոյն Գրիգորիսի"։